ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» օգոստոսի 2023 թվականի N **655**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 01. 09.2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հրատարակումը դադարել է 2023 թվականի հունիսի 01-ին, սակայն Ստեփանավանի համայնքապետարանը 08.08.2023թ.-ին զանգվածային լրատվական միջոցներով հողամասերի աճուրդ-վաճառքի մասին հայտարարություն է տարածել նախքան ՀՀ կառավարության 17.08.2023թ. թիվ 1399-Ն որոշումը ուժի մեջ մտնելը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն, 17.08.2023թ. թիվ 1399-Ն որոշումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, ***որոշում եմ.***

1. Չեղարկել 2023 թվականի սեպտեմբերի 15-ին Ստեփանավանի համայնքապետարանում կայանալիք հողամասերի աճուրդ-վաճառքը:
2. Ստեփանավանի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովին հանձնարարել զանգվածային լրատվական միջոցներով տարածել հայտարարություն սույն որոշման 1.-ին կետի մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**